

ԿԱՄ

ԻՐԻՆԻ ՅԱՌԱԶԱՐԱՆ

1982-ի Սեպտեմբերին, ԿԱՄ-ի երկրորդ թիւի սեմին կանգնած իրրեւ հայ գրական աշխարհին հանդիսատես՝ զոհունակութեամբ կ'ողջունենք հրատարակչական կարեւոր լատտակ մը: Ատոր մէջ՝ Յ. Օշականի համապատկերի վերջին հատորներու լոյս ընծայումը ամենէն աչքառուն է, ու սահմանուած է շրջադարձ մը յառաջացնելու անցեալին հետ մեր վերաբերումին մէջ: Բայց գրականութեան պատմութեան սեռին պատկանող կարգ մը այլ գործեր, Շահինեանի՝ Շահնուրի նուիրած հատորը, Մ. Թէօլէօլեանի Դար մը գրականութիւն ձեռնարկին երկրորդ հատորը, որ Սփիւռքի գրականութիւնը կը պարագրկէ, մինչեւ իսկ Սփիւռքահայ գրականութեան պատմութեան ուրուագծերը, որ կուգայ Հայաստանէն եւ իր չափանիշներով՝ կը քննարկէ ու կը պատմէ այդ գրականութեան առաջին շրջանը, կը թարմացնեն առնուազն մօտաւոր անցեալին հանդէպ հետաքրքրութիւնը:

Բայց աւելի՞որդ է արդեօք պատմական-քննադատական դործերուն մէջ մեր սպասումը՝ վճռական քայլի մը, որ հաղորդ դարձնէր զանոնք գրականութեան մը մեծութեան, եւ երկրորդաբար՝ երեւոյթի մը, գոր պիտի կոչէինք Սփիւռքի արեւմտականացումը, եթէ գաղափարը չպահանջէր մեզմէ յղացական բացայայտում մը: Աւելի՞որդ է այդ սպասումը, երբ սփիւռքեան իրողութիւնը եւ զայն հիմնաւորող Աղէտին էութիւնը կը մնան անանդադարձ, երբ Պոլսոյ եւ Սփիւռքի մեծ գործերուն բուն տալանապը կը մնայ տարրական իմաստով մը՝ գրաքննուած, երբ ժողովուրդի մը ժողովուրմին հնադարեան յղացումը սկսած է մեր աչքերուն տակ ցնդիլ, տակաւին անտիրապետելի արդիական սկզբունքի մը յառաջացումով: Բոլոր քննադատները որոնք իբր թէ Սփիւռքի մշակոյթով, անոր գրականութեան անցեալով ու ճակատագիրով կը մտահոգւին, կանգ կ'առնեն իրականին մէջ՝ այդ երեւոյթէն ասդին: Անթափանցելի է իրենց: Կը կառչին՝ յղացական կաղապարներու որոնք այլեւս էապէս անբաւական են գալիքը մտածելու համար, եւ ուրեմն՝ անցեալը կարգալու համար: Որովհետեւ էապէս անբաւական են նախ՝ արեւմտահայ եւ սփիւռքահայ մեծագոյն էջերը ընկալելու եւ իրենց խորքին բանալու համար:

Գոհ ենք այդ իմաստով՝ Մ. Թէօֆօլեանի գործին երկրորդ հատորի հրատարակումով: Այդ գիրքը, իր համայնագիտական եղանակով ու կերպարանքով՝ կը կնքէ ժամանակաշրջանի մը վերջաւորութիւնը: Զանց չենք առներ անշուշտ անոր համարատուական բոլոր արժանիքները: Բայց վերջացածը միայն կը պահանջէ համայնագիտարաններ: Զենք ըսեր «համապատկերներ», հաւատալով որ Օշականի գործը ուրիշ տրամաբանութեան մը կը հետեւի, տակաւին տարագելի: Ինչ որ վերջացած է, անշուշտ գրուածքի պաշտօնը չէ, ո՛չ ալ անպայման գրականութիւնը: Վերջացածը նախ եւ առաջ՝ գրութիւններուն վերաբերուելու եղանակ մըն է, որ շատ չէ շարժած գրականութեան դար մը «նուաճում»ներով: Մեծ գործերու «մեծութիւն» կը յատկանշուի նախ անով՝ որ կը զանցէ ամբողջովին պարտադիր ծրագրումը, որ մինչեւ այսօր կը շարունակէ որոշադրել եւ «օրինափակել» այդ գործերուն ընթերցումը եւ հասկացողութիւնը:

Գալիքը հաւանաբար գրուածքներուն մէջ է, բայց կու «գայ» ան եթէ «հասկնանք» զանոնք: Ապագան մեկնաբանութեան հարց մըն է: Հոս ու հոն՝ գիտենք որ այդ չսպասուած ապագան է որ կը պատրաստուի:

Սփիւռքի վերլուծական գրականութեան վաստակը այս վերջին տարիներուն՝ առաջին աչքառու երեւոյթը կը կազմէր: Երկրորդը այն է ուրեմն՝ որ ատով վերջաւորութիւն մը կ'ամբողջանայ, վախճան մը կը լրացնէ ինքզինք, գրականութեան գործադրումին ու ընթերցումին հին ծրագրումը վերջնականապէս իրագործելով: Ծրագրումը, այսինքն նաեւ՝ ինքնայղացումը: Պարտականութիւնը որ կ'իյնայ մեր եւ ուրիշներուն ուսերուն՝ այդ դարու մը ծրագրումը եւ ինքնայղացումը չըջագծել է, վերագործնելով զանոնք իրենց պատմական ծնունդին, ու արձանագրելով վերջապէս այդ ծնունդին մէջ ծածկուածը: Ծնունդին մէջ ծածկուածին մասին՝ վկայած են կարգ մը անուններ մեր գրականութեան, անոնք՝ զորս կարելի չէ այլեւս շարել համայնագիտական կերպով, պատմական ընդունուած չափանիշերու համաձայն, տասնեակներով հաշուուող ուրիշ անուններու կողքին, մշակութային ամբողջական պատկերացումի մը հաւատարիմ մնալու նպատակով: Մեկնաբանութեան հարց մըն է ապագան, այո՛, բայց պայմանաւ որ պատմական ծնունդին մէջ ծածկուածը խնդրոյ առարկայ ըլլայ ու երեւան ելլէ մեկնաբանութեան մէջ: Այդ ձեւով՝ «նոր»ը կրնայ յայտնուիլ, «նոր»ը՝ որ մեզմէ իւրաքանչիւրն համար՝ կը

մնայ տակաւին յայնորէն անյգանալի: Մեզմէ իւրաքանչիւրը իր մտայղացումներուն հետեւելով ու իր կարողութիւններու ծիրին մէջ՝ կը սպասէ անոր, ու կ'աշխատի անոր յայտնութեան: Այնպէս որ բոլոր կանխապայտ կարծիքները, տարամիտութիւններու շեշտաւորումները, անձնաւորութիւններու հակադրութիւնները, ճրի ապրանք են գրականագէտներու եւ քննադատներու գրչին տակ, ետ կը մնան իրականութենէն: Մեկնարանական ինչպէս գրական աշխատանքը այսօր, հոն ուր կը ծառայէ չսպասուածի յայտնութեան, չափելի չէ մշակութային արժէքի ծրագրուած չափանիշերով: Կը ծառայէ գրականութեան ծնունդին մէջ ծածկուածի յայտնագործութեան:

2

ԿԱՄԻ ներկայ թիւը շարունակութիւնն է առաջինին: ԿԱՄԻ գիտակցութիւնն ունէր զար մը գրականութեան վախճանը արձանագրելու, ու դալիքի սեմին կանգնելու, կոյր արձանի մը նման: Յաւակնութիւնն ունէր իր մէջ հաւաքելու բոլոր հոսանքները, որոնք կը զուգամիտէին ղէպի ծնունդին մէջ ծածկուածը, եւ այդ ձեւով՝ ղէպի գալիքին սեմը: Առաջինէն երկրորդ թիւը անցնելով՝ գիտակցութիւնն ու յաւակնութիւն կը մնան նոյնը: Բայց շարունակութիւն մըն է հոս երեւոյց անուններու ցանկով նաեւ: Առաջին թիւին մէջ՝ Սարաֆեանի ՎԵՆԱԷՆԻ Անտառը առարկան էր Գ. Պըլտեանի վերլուծական գրութեան: Որոշեցինք Սարաֆեանի այդ գրութիւնը հրատարակել մեր էջերուն մէջ, վստահ ըլլալով որ մեր ընթերցողներու մեծամասնութեան՝ Նալիի պարբերաթերթին 1947ի թիւերը, ուր այդ գրութիւնը կ'երեւէր, մատչելի չէ այսօր: Պէտքը զգացինք վերլուծական գրութեան կողքին Սարաֆեանը տրամադրելի դարձնել: Եւ ի վերջոյ՝ այդ էջերը ամենէն գեղեցիկներէն են մեր գրականութեան մէջ: Անոնց առթած հմայքը բաւական է բացատրելու համար վերահրատարակութիւնը: Սարաֆեանի կողքին՝ Որբունին կը կազմէ մեր անմիջական անցեալը: Իր պարագան հոս քիչ մը տարբեր է սակայն: Որբունիի արշիւններուն մէջ կը մնան իր Օրագիրը, եւ Հալածութեան շարքին հինգերորդ եւ վեցերորդ հատորները: Կը հրատարակենք հոս վեցերորդ հատորին պարունակութիւնը, Զի քո է կարողութիւն վերնագրով մեզի հասած: Յետ մահու հրատարակութեան մը սովորական գծաւորութիւնները աւելի եւս շեշտուած են Որբունիի պարագային, քանի որ Որբունիէն մնացած գործերը վերականգնուածի աշխատանք մը կը պահանջեն հրատարակիչէն: Այդ գծուա-

կեանքի ցաւը, մեր կոնակի խաչին շուրջ ոչ ալ մահը

ալնքան գէշ են՝

որքան իյնալ հրոյիլ դորդացող մեքենային անիւներուն արանքը

ոչ իսկ գիտնալ թէ հոն էիր սկիզբէն՝ երբ մեքենայ իսկ չկար

ու այդ տեղէն պիտի չելլես յաիտեան,

պիտի ուզես ինքզինքդ բզկտել պարապութեան պաստառէն ուր փակեր ես

քառակուսի աշխարհին հետ՝ լայնք ու երկայնք պրկուած

սառնց խորքի պատերու մէջ ողջ ողջ թաղուած կը տոկանք

գիտակցութեան մորթին մէջ զիս փաթթեր են ի՞նչպէս ձեռքս դուրս հանեմ

հասնիմ ինծի ո՞ր կ'երթամ կոր ամայութեան մայրերէն

կեցիր կեց'իր... ինձ սպասէ՝ մեզ խաբեր են կեանքէն մահ

եւ դարձիր, չկայ ճամբայ ոչ ալ ճամբորդ

միայն կիսատ շինուած ու լքուած օթեւան մը

միայն յոյս-մը ապրելու սիրելու եւ մեռնելու

սառնց երբեք բառի ամուլ արգանդէն դուրս կարենալ ելլելու...: